



ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Նրուսաղեմի հայոց Պատրիար-
քական տեղապահ)

Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն

(Խոսոված Վեհափառի զազադի առաջ՝ օծման կարգին)

«Զի այր մեծ անկալ յարայել»:

Այս բառերով ողբաց, Հին Ուխտի մեծ առաջնորդը Դավիթ, իր քաջ գորավար՝ Աբեհնեթի մահը: Ուրբան տեղին է կրկնելու նույն բառերը, այս առիթով, մեր մեծ Հանգուցյալի զազադին առջև, որովհետև իրապես մեծ մարդ մըն է, որ կիյնա և կփշրվի այս դազադին մեջ:

Անոր համար սուգի մեջ է Մեծի Տանն Կիլիկիո միաբանությունը և բովանդակ ժողովուրդը, որովհետև այս մահով կխորտակվի իր հմայքին ոսկեսյունը: Սուգի մեջ է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, վասնզի այս կորուստով կփշրվի արմատախիլ իր տակավ ճորագող անտառի մեծ կաղնին:

Վշտի մեջ է ազգը բովանդակ, որովհետև հանձին երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսի, ան կկորսնցնե իր ամենեն փառավոր գավակներեն մին, որոնք հարյուրամյակներու ընթացքին միայն կծնին:

Անմխիթար է հայ մտքին փաղանգը, զի այս մահով կշիջի իր անդաստանին մեծ և կորովի մշակը:

Մեծ մարդերը պետք չունին դրվատիքի, անոնց կյանքը իրենց մահեն առաջ կհորինե արդեն ոսկե էջը իրենց պատկանած ժողովրդի պատմության: Մահը զայն ավելի կպայծառացնե, գլուխ-գործոց պատկերի մը նման, որ որքան հեռանա, այնքան ավելի կխորանա և կգեղեցկանա:

Բարոյական և իմացական մեծ ու գեղեցիկ ուժ մը կրածովի մեզմե այս մահով, սուգի մատենելով համայն հայության սիրտը: Նքե

մեռնողի մը արժեքը իր ձգած բացովն է որ կշափվի, անհուն է պարապը, գոր ան կրողու իր մահովը, ոչ միայն Կիլիկիո Կաթողիկոսության շրջանակեն ներս, այլ մեր եկեղեցական և ազգային արժեքներու գանձարանին մեջ:

Նուամենժար Գարեգին Կաթողիկոսին մեջ իրենց լուսմը կգտնեն մեր եկեղեցական և ազգային մեծ դեմքերու մեծ արժեքները: Սնկկա ուներ Խրիմյանի մը հայրենազավեր հոգին, Սրվանձտյանցի հայրենաշունչ բնագործը, Օրմանյանի խանդը, Դուրյանի խոսքին ուժը և եկեղեցվո պետի և հոր բոլոր առաքինությունները:

Առաջին առիթով իսկ նկատելի էին իր հոգիին բացառիկ որակը և իր մտքին շնորհները: Իր անձը զեղուն էր օծությամբ, և անուշ լույս մը կհառազայթեր կարծես իր բովանդակ էությունեն: Այդ լույսը չէր շլացներ, բայց հարաճուն փաղցրությամբ կհամակեր զինք դիմավորողը:

Իր հոգին զերծ էր մոլոր ու խոտոր շարժումներից: Հավատարիմ մեր եկեղեցվո մեծ ավանդություններուն, ան զիջում չբռավ երբեք ճնշումին, դժվարությանց և շողովին, իր խղճմտանքին ցուցմունքը սիրեց ունենալ իրն ուղեցույց և զսպանակ իր գործունեության:

Նքե իր գործը հաճախ բախեցավ դժվարությանց, «աղբատին տունը անպակաս է վներ» բսեր է մեր ժողովուրդը, սակայն մեծապես սիրվեցավ և հարգվեցավ բոլորեն անխախտ: Իր մաքուր հոգիին արտափայլու-

մը, անխոնջ աշխատասիրությունը, արվեստագետ բանվորի հայացքը և հայ արժեքներու նկատմամբ իր մշտնադիմող ոգին զինք կրենին բոլոր ժամանակներու մեր ընտրյալներեն:

Բանաստեղծ մը կար Գարեգին Կաթողիկոսի մեջ, որովհետև սիրուն էր կեդրոնը իր էությունը և գաղտնիքը իր մեծության և մեծագործությանը: Առկն կրխեր իր հոգեկան ուժը, աշխատության անհուն խանդը և փառքը հակումը մեր արժեքներուն:

Իր գործը մեր ազգային մշակույթի բանկարժեք ֆակի մը երեսներուն հայտնաբերումը եղավ: Երե թորամանյան հայ ինֆնուրույն հարտարապետության հայտնաբերողն է և Կոմիտաս հայ երաժշտության, հանգուցյալ Գարեգին Կաթողիկոսի մշտափառ փառքը պիտի մնա առաջին և մեծ հայտնաբերողը եղած ըլլալը մեր մանրանկարչության և զարդարվեստներուն:

Իր բազմերես գործը պաշտպանված է ոչ միայն քափանցող իմացականությամբ, այլ առաւելադրեալ ստուգված և ճշգրտված տվյալներու առատությամբ: Մեծ է իր վաստակը, և իր բովանդակ կյանքը նվիրվեցավ այդ արժեքներու վերբերման, որոնց ոչ միայն ֆառակը, այլ մանավանդ որակը ծանրակշիռ է և պատկանելի: Անոնց մեջ բարախող շունչը Հայրենիքին կառնէ իր բխումը և մեր ժողովուրդէն՝ իր վկայությունը:

Ան ունեցավ արժանիքներ, իբրև մարդ, իբրև միտք և գործ, որոնց զուգակշիռը դժվար է ճշտել և անոնցմէ յուրաքանչյուրը առանձին փառք մը կրնար կազմել:

Իսկ այս բոլորին վրա կենսագայքեր իր հավատքին լույսը, իր հոգիին մաքրաբոց կանքերը: Անիկա, նման մեր պատմության տարբերունքին, մինչև իր խոր ակույրը, մնայուն կերպով փորձեց բարձրանալ մեր մտքի ու հոգիի լեռն ի վեր, ի խնդիր Նոյան տապանին: Այդ տապանը Հայաստանեայց եկեղեցին էր և այն բոլոր արժեքները, որոնք իրմով են պայմանավոր:

Հիշատակարանէ հիշատակարան, ֆառ ֆառ, ավերակէ ավերակ անիկա շրջեցավ, կորստե փրկելու համար վտանգված գեղեցկությունները, մոռացության ընդարձակ և

խոր հեռուներէն վեր բերելու համար անգին գոհարները մեր անցյալի արժեքներուն: Այս տեսակետով անիկա մեր անցյալի ձայնը, ներկայի ոգին և ապագայի խորհուրդն էր, որ անոր մեջ այցելության եկած էր մեզի:

Անրիկիսս իր օրով եղավ մեծ իրականություն մը, մշակույթի տուն մը, ամբողջական կատար մը: Տակավին մինչև երեկ, ան ֆուլբետի պատուման մըն էր բացված հայության վրա. սակայն շնորհիվ իր նախորդներուն, բայց մանավանդ իրեն, այսօր Անրիկիսսը կոչված է ըլլալու կաթողիկէ մը Սփյուռքի հոգիին վրա բացված, հոն սկզբնավորված և հառաջ տարված հոգիի և մտքի կյանքին շնորհիվ:

Ահա քե ի՛նչ մեծ արժանիք մըն է, որ կիյնա և կփշրվի այս դազալին մեջ, ձգելով անգոցելի բաց մը ոչ միայն Կիլիկիո Աթոռին շուրջ, այլ նաև մեր եկեղեցվո և ազգային գանձարանին մեջ:

Աղոթենք, որ անմահության Տերը ընդունի իր հավատարիմ ծառայի հոգին ի շարս հոգվոց երանյալ հայրապետաց: Տա միաբարություն, մանավանդ սեր և կորով աստե մնացողաց, հոգեռանդն ուխտով կենդանի պահելու համար իր գործը, շարունակելու իր հոգին այս Աթոռին մեջ և բովանդակ Հայ եկեղեցվո համար:

Դուք, որ իր աշակերտներն ու ձեռնասունները եղաք, ապրեցուցե՛ք այդ գործը, իր հոգին, իր գաղափարը: Այս է ճշմարիտ հարգանքը, զոր իր ազնվական և բարի հոգին պիտի սպասեր մեզմէ:

Աղոթենք ամենքս, սգավոր ժողովուրդ հայոց, որ բարին Աստված այցելէ ազգիս և եկեղեցվույս Հայաստանեայց, անփորձ պանէ իր արշունով գնյալ հոտը, անասան և անդորր պանէ մանավանդ անոր նվիրապետական իշխանությունը, զՄայր Աթոռն Արարատյան և անոր ֆաշարքուն Գանակալը, վշտաբեկ իր ամենէն փառք սիրույն մեջ, իր հոգեհարազատին այս մահովը:

Հանգիստ հոգևատանջ մարմնույդ, անդորր մշտանույզ մտացդ, խաղաղությամբ հոգվույդ, աստվածարյալ Սուրբ Հայրապետ:

